



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 82 -Ա/2

«19» հոկտեմբեր 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐՈՎ «ԲՈՒԺԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՅԱԾ
ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի
2015 թվականի մարտի 27-ի N 203-Ն հրամանի 11-րդ կետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական
կրթական ծրագրով «Բուժական գործ» մասնագիտությամբ կրթություն ստացած անձանց
պետական ամփոփիչ ատեստավորման հարցաշարը՝ համաձայն հավելվածի:

2. Ուսումնական հաստատության տնօրենին՝ քննությունից առնվազն մեկ շաբաթ առաջ
սույն հրամանի հավելվածով հաստատված հարցաշարի հիման վրա կազմել հարցատոմսեր,
որում կարող է ընդգրկվել նաև մեկ կամ երկու գործնական աշխատանքների կատարում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող
օրվանից:

Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

1/19/2023

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

Հավելված
Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարի
2023 թ. հունվարի -ի
N -Ա/2 հրամանի

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐՈՎ «ԲՈՒԺԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

1. Հազ.պատճառները, տեսակները(հազ առանց արտադրության, արտադրությամբ հազ):
2. Խորիխի հետազոտություն: Արյունախիտում. Պատճառները, առանձնահատկությունները տարբեր հիվանդությունների դեպքում:
3. Ցավ կրծքավանդակում. պլևրալ ցավեր, այլ բնույթի ցավեր:
4. Ցիանոզ, մաշկի այլ փոփոխություններ, այտուցներ, Հիպոկրատի մատներ:
5. Շնչառական համակարգի ախտահարման դեպքում կրծքավանդակի զննման ժամանակ դիտվող փոփոխությունները. շնչառության հաճախության և խորության փոփոխությունները, ներշնչման և արտաշնչման տևողության հարաբերակցության փոփոխությունը:
6. Կրծքավանդակի ձևի և շարժունակության գնահատում(կրծքավանդակի ախտաբանական տիպերը):
7. Շնչառական համակարգի ախտահարման դեպքում աուսկուլտացիայի ժամանակ դիտվող փոփոխությունները: Աուսկուլտացիայի հիմնական կետերը:
8. Հիմնական շնչառական աղմուկները: Վեզիկուլյար շնչառություն. Նրա փոփոխությունները: Բրոնխեալ շնչառություն. Ֆիզիոլոգիական և ախտաբանական: Արտաշնչման երկարում:
9. Լրացուցիչ շնչառական աղմուկներ. չոր և թաց խզզոցներ: Կրեպիտացիա, պլևրայի քսման աղմուկ:
10. Շնչառական համակարգի հետազոտման լրացուցիչ մեթոդները:
11. Թոքաբորբեր: Արտահիվանդանոցային և ներհիվանդանոցային թոքաբորբեր:
12. Բլթային թոքաբորբ:
13. Օջախային թոքաբորբեր: Ատիպիկ թոքաբորբեր:
14. Թոքաբորբերի լաբորատոր և գործիքային ախտորոշում: Բուժում:

15. Խրոնիկ բրոնխիտ: Դասակարգումը: Խրոնիկ օբստրուկտիվ բրոնխիտ և ԹԽՕՀ:
Պատճառագիտությունը և կլինիկական պատերը:

16. ԹԽՕՀ լաբորատոր և գործիքային ախտորոշման մեթոդները:

17. Բրոնխիալ ասթմայի դասակարգումը: Կլինիկական դասակարգումը:
Պատճառագիտությունը:

18. Ասթմատիկ վիճակ: Ասթմատիկ վիճակի կլինիկական պատկերը:

19. Ստամոքսաղիքային ուղու ախտահարումներով հիվանդների հիմնական գանգատները:

20. Անամնեզի առանձնահատկությունները ստամոքսաղիքային ուղու ախտահարումներով հիվանդների դեպքում:

21. Որովայնի ցավերի բնութագիրը:

22. Այրոց: Դիսպեպսիա: Սրտխառնոց: Փսխումը և նրա տեսակները:

23. Փքվածություն: Փորլուծություն: Փորկապություն: Արյունային կղանք: Ախորժակի խանգարում:

24. Որովայնի շոշափման կանոնները. Մակերեսային շոշափում:

25. Որովայնի խորանիստ շոշափում: Ասցիտի որոշումը:

26. Քրոնիկական գաստրիտ, դասակարգումը, պատճառագիտությունը, ախտաձագումը:

27. Քրոնիկական գաստրիտ, կլինիկական պատկերը: Քրոնիկական ոչ ատրոֆիկ գաստրիտ:

28. Ստամոքսի և 12-մատնյա աղու խոցային հիվանդություն, պատճառագիտությունը, ախտաձագումը, դասակարգումը:

29. Ստամոքսի և 12-մատնյա աղու խոցային հիվանդություն կլինիկական պատկերը, ախտորոշման եղանակները:

30. Ստամոքս-աղիքային արյունահոսություն:

31. Սրտանոթային համակարգի հիվանդությունների հիմնական ախտանշանները: Ցավ կրքավանդակի շրջանում. Առաջացման պատճառները, բնութագիրը և ուղեկցող բնորոշ ախտանշանները:

32. Կրծքավանդակի շրջանում ցավի տեղակայումը, բնույթը, տևողությունը, ճառագայթումը, առաջացնող կամ ուժեղացնող գործոնները, նվազեցնող գործոնները, այլ ախտանշանների հետ զուգակցումը:

33. Սրտի իշեմիկ հիվանդության ռիսկի հիմնական գործոնները: Հևոցի զարգացման պատճառները: Հևոցի նոպաների հաճախության, տևողության և սկսվելու առանձնահատկությունների նշանակությունը:

34. Սրտանոթային և շնչառական համակարգերի հիվանդությունների դեպքում առաջացած հևոցի տարբերակումը:

35. Ուշագնացություններ. Առաջացման պատճառները: Վազրվագալ ուշագնացության տարբերակումը էպիլեպտիկ նոպայից:

36. Սրտանոթային համակարգի հիվանդությունների դեպքում առաջացող հազի և արյունախիւման ախտորոշիչ դերը: Արյունախիւման պատճառները:

37. Սրտանոթային համակարգի հիվանդությունների դեպքում զարկերակային պուլսի շոշափման ախտորոշիչ դերը:

38. Սրտանոթային համակարգի հիվանդությունների դեպքում պրեկորդեալ հատվածի շոշափման ախտորոշիչ դերը:

39. Սրտի առաջին տոն. Առաջացման մեխանիզմները: Ուժեղացման և թուլացման պատճառները:

40. Սրտի երկրորդ տոն. առաջացման մեխանիզմները, ուժեղացման և թուլացման պատճառները: Սրտի երկրորդ տոնի ճեղքումը և երկատումը:

41. Սրտի սիստոլիկ աղմուկներ. աուսկուլտացիայի ակզբունքները, առաջացման պատճառները:

42. Սրտի դիաստոլիկ աղմուկներ. դասակարգումը, առաջացման պայմանները:

43. ՋՀ: ՋՀ-ի չափումը Կորոտկովի անուղղակի աուսկուլտատիվ մեթոդով:

44. Էլեկտրասրտագրություն. Ստացման սկզբունքները, էլեկտրոդների միացումը: ԷՍԳ արտածումները:

45. Հենաշարժիչ համակարգի հիվանդությունների ժամանակ հիվանդների գանգատները, անամնեզտիկ տվյալները:

46. Հենաշարժիչ համակարգի հիվանդությունների ժամանակ ֆիզիկալ հետազոտման մեթոդները:

47. Դաշտանային ցիկլ: Դաշտանային ցիկլի նյարդաէնդոկրին կարգավորումը:

48. Արգանդի միոմա:

49. Բազմապտուղ հղիություն:

50. Ընտանիքի պլանավորում: Հակաբեղմնավորիչ մեթոդներ:

51. Կեսարյան հատում: Ցուցումները: Պայմանները:

52. Հղիության կրելախախտ: Ինքնաբեր վիժում: Դասակարգում, մանկաբարձական տակտիկան:

53. Մանկական գինեկոլոգիա: Վաղաժամ և ուշացած սեռական հասունացում:

54. Հղիության կրելախախտ: Վաղաժամ ծննդաբերություն:

55. Ծննդաբերություն: Պատճառներ: Նախանշաններ: Կլինիկա: Վարում:

56. Սուր որովայնը գինեկոլոգիայում: Արտաարգանդային հղիություն:

57. Վաղ և ուշ հետծննդյան շրջան: Կլինիկա: Վարում:

58. Սուր որովայնը գինեկոլոգիայում: Ձվարանի ուռուցքի տոտիկի ոլորում:
59. Հղիության վաղ և ուշ ժամկետների ախտորոշում (Հղիության կասկածելի, հավանական, հավաստի նշաններ, պտղի սրտի զարկերի լսում, արտաքին մանկաբարձական հետազոտություն):
60. Հղիության առաջին կեսի արյունահոսություններ: Բշտիկային զանգված:
61. Հղիության երկրորդ կեսի արյունահոսություններ (Առաջադիր պլացենտա, Նորմալ տեղակայված պլացենտային վաղաժամ շերտազատում):
62. Վիրաբուժական հիվանդի հիվանդության պատմագրի սխեման:
63. Վիրահատության էտապները:
64. Ներհիվանդանոցային վարակ, կանխարգելումը:
65. Ասեպտիկա:
66. Անտիսեպտիկա:
67. Վիրաբուժական գործիքների և վիրակապական նյութերի ստերիլիզացիա:
68. Արյունահոսություն, դասակարգումը, արյունահոսության դադարեցման եղանակները:
69. Արյան փոխներարկում, արյան բաղադրամասերը:
70. Ցավազրկման տեսակները, ընդհանուր ցավազրկում:
71. Վերքեր, դասակարգումը, լավացման էտապները:
72. Վերքի առաջնային և երկրորդային վիրաբուժական մշակում:
73. Բաց և փակ վնասվածքների տեսակները, կրծքավանդակի փակ վնասվածքներ:
74. Որովայնի վնասվածքներ, ախտորոշումը, բուժումը:
75. Ոսկրերի կոտրվածքներ, դասակարգումը, ախտորոշումը, բուժումը:
76. Հոդախախտեր, դասակարգումը, ախտորոշումը, բուժումը:
77. Այրվածքներ՝ ջերմային, քիմիական, բուժումը:
78. Ցրտահարություն, դասակարգումը, ախտորոշումը, բուժումը:
79. Ֆուրունկուլ, կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
80. Կարբունկուլ, կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
81. Թարախակույտ, կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
82. Ֆլեգմոնա, կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
83. Մաստիտ, կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
84. Գազային գանգրենա, կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
85. Փայտացում, կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
86. Գանգրենա, կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
87. Դիֆուզ տոքսիկ խալիպ, կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
88. Թուֆք, էթիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը, բուժումը:

89. Շագանակագեղձի ադենոմա:
90. Երիկամների վնասվածքներ, կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
91. Որովայնի ճողվածքներ, դասակարգումը, աճուկային ճողվածք:
92. Ստամոքսի և 12 մատնյա աղու խոցային հիվանդություն, ախտաձագումը, կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
93. Ստամոքսի և 12 մատնյա աղու խոցային հիվանդության բարդությունները:
94. Խրոնիկ քարային խոլեցիստիտ, կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
95. Սուր ապենդիցիտ, կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
96. Աղիքային անանցանելիություն, դասակարգումը, կլինիկան, բուժումը: